նորա խմբագիր պ. Արշակ Եղիգարը հիանդանալով ստիպուած եղաւ առժամանակ դադարեցնել թերթը։

Լոյս է տեսել «Գիւղատնտես» անունով մի նոր շաբաթաթերթ, որի հրատարակութեան որոշ չափով դրական նպաստներ են տուել Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը և մի քանի հայ հասատատութիւններ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.—«Լումայի» ներկայ համարում մենք տպում ենք այն լրագիրների յայտարարութիւնները միայն, որոնք տպել են «Լումայի» յայտարարութիւնը։

«Բաղմավէպ»-ի խմբագրութեան.—Մենք մի անգամ էլ խնդրում ենք Ձեզ ուղարկել խմբագրութեանս հանդ. Մուրացանի ընդարձակ յօդուածը, որ ինքը հեղինակը մեր միջոցով պահանջել էր Ձեզանից, բայց որ մինչև այժմ չհաճեցաք հասցնել մեզ և ոչ իսկ պատասխանել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Անձեռնհաս գտնուելով առանձին առանձին պատասխանել ամսոյս 27-ին՝ անուանակոչութեանս տարեդարձի առիթով, հեռագրով և նամակով ինձ շնորհաւորութիւն և բարեմաղթութիւն ուղղող գերապատիւ սրբազան եպիսկոպոսներին, բարեշնորհ վարդապետներին, բարեկրօն քահանաներին և յարգելի քաղաքացիներին՝ խնդրում եմ Ձեր բարեհաճ թոյլտուութիւնը» «Լումայ»-ի միջոցով յայտնել նրանց ամէնքին սրտագին գոհունակութիւնս, մաղթելով յԱստուծոյ բոլորի համար յաջողութիւն, անտրտում ուրախութիւն, կատարեալ առողջութիւն, երկնաւոր և երկրաւոր ամենակերպ մխիթարութիւն։

29 Յունուարի 1909 ամի
ուրբ. Էջմիածին.

ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊՍ. ՊԱՐՉԵԱՆՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ալէքս.—Ատրպետին. Ձեր նոր յօդուածի մասին Ձեզ նամակ կգրենք։

Սալիան. բժ. Մ. Արամեանցին. Շնորհակալութիւն Ձեր համակրական նամակի համար։ Ձեր առաջարկութեան նամակով կպատասխանենք։ Գրքերը ստացել ենք։

Էջմիածին.—Յար. Պետրոսեան. Բանաստեղծութիւնները ստացել ենք. շնորհակալ ենք Ձեր բարեմաղթութիւնների համար։

Վաղարշապատ. Մ. Բ. Շարունակեցէք։ Շնորհակալութիւն։

—Մոլլին. Ի՞նչ էք լռել։

Ն. Նախիջեան. Ե. Շահազիզին. Ձեր յօդուածի շարունակութիւնը կտպուի հետևեալ համարում։

Կ. Պօլիս. Քննադատին—Խնդրում ենք ուղարկել Ձեր յօդուածների շարունակութիւնը։ Նամակ կգրենք։

Բագու. Գ. Ե.—Ուղարկեցէք խոստացած յօդուածը։

Ն. Բայազիտ. Խանդաղէ. Ձեր վէպը կտպենք հետևեալ համարից։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գար. Ենգիբարեանց. Մատենախօսութիւն. Թիֆլիս 1909 1 ռ. 25 կ.
Ղազար Փարպեցի. Ղուկասեան մատենադարանի հրատ. 1909 30 կ.
Գրական-գիտական ժողովածու. խմբ. Ե. Թօփչեան. հրատ. տիկ. Զ. Մեհրաբեան. Թիֆլիս 1909 1 ռ. 50 կ.
Յովհ. Թումանեան. Անբախտ վաճառականներ. Թիֆլիս. 1909 թ. 35 կոպ.
— Շունն ու կատուն. 25 կ.
— Ուլիկը. 15 կ.
— Անյաղթ աքլորը. 15 կ.
— Ծիտը. 15 կ.
— Աղուէսը. 15 կ.
Օրացոյց. Երուսաղէմի տիպ. 1909.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔՀՆ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացուած է 1909 թ. բաժանորդագրութիւնը
(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով

Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ.

Տարեկան ՀԱՍԿԵՐ,	մանկ. բաժին 3 ռ.	մանկավարժ. բաժ. 4 ռ.
Կէս տարուանը . .	1 ռ. 80 կ.	. 2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը . .	— 30 կ.	. — 35 կ.
Պարսկաստանում . . .	3 ռ. 50 կ.	. 4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆԸ ֆր.	ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.	15 ռ.

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25 (Тифлисъ, Редакція журнала «А с к е р ъ» Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker».

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան